ԳԱՅԱՆԵ ԱԹԱՆԵՍՅԱՆ

ՔՐԻՍՏՈՍԻ ԿԵՐՊԱՐԸ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Թումանյանի ստեղծագործության մեջ դժվար է առանձնացնել հատուկ Քրիստոսին նվիրված գործեր՝ չափածո թե արձակ, որովհետև հաճախ բուն իմաստը ենթատեքստում է, փողոտակում: Բայց նա հաճախ է անդրադարձել Աստծու Որդու կերպարին: «Մեծ եւ Անմահ» հոդվածում, որ գրել է 1911թ. Զատկի առիթով, նա անդրադառնում է Քրիստոսի կյանքի վերջին օրերի ողբերգական դեպքերին՝ շրջապատի հալածանք ու մատնություն, արյան ծարավ ամբոխի «ի խաչ» աղաղակները, Պիղատոսի կեղծավորությունն ու հանցավոր անտարբերությունը անմեղ մարդուն մահվան դատապարտելիս… Այս ամենի մեջ նա տեսնում է մարդկային կյանքի հավերժական դրաման: Եթե արդարության եւ ճշմարտության հալածանքը, կեղծիքն ու դաժանությունը, մարդկային հիմարությունն ու երախտամոռությունը եզակի ու բացառիկ բաներ լինեին, ապա Քրիստոսի պատմությունը «վաղուց կլիներ մոռացված որպես մարդկային հոգուն ու կյանքին խորթ մի դեպք: Ընդհակառակը,- շարունակում է Թումանյանը,- մեծությունը հենց այն է, որ այս ամենը ամեն տեղ, աշխարհքի ամեն անկյունում է կատարվում եւ անմահությունն էլ հենց այն է, որ ամեն ժամանակ է պատահել եւ կրկնվում է ամեն օր»: Դուրս գալով այդ «Մեծ Արդարի» կյանքի շրջանակներից՝ Թումանյանը տեսնում է ամենուր «չարություն, ստախոսություն, շահամոլություն, վրեժխնդրություն, կաշառք, վերջապես…», տեսնում է, որ ճշմարտությունը «խաչվում է ամեն տեղ աշխարհքում» եւ «ամեն օր մենք խաչելության հանդիսատես ենք կամ մասնակից ենք» : Զատկի առիթով գրված մեկ այլ հոդվածում, կրկին անդրադառնալով Քրիստոսի կերպարին՝ Թումանյանը նշում է, որ մարդկանց համար տոնը դարձել է «որկրամոլության ու շռայլության օր»՝ հեռացնելով նրանց բուն էությունից, եւ հորդորում է, որ մարդիկ, Քրիստոսի հարությունը նշելով, ինչ-որ չափով իրենց էության մեջ կրեն «Նրա անսահման սերն ու բարությունը, Նրա աստվածային մեղմությունն ու անընչասիրությունը»[1]:

Թումանյանի համար Քրիստոսը մարդկային առաքինությունների գերագույն մարմնավորումն է, կատարելատիպն ու բացառիկը: Բանաստեղծը երազում է, որ մարդը լինի Նրա նման «անթերի մարդկութեամբ եւ անպակաս աստուածութեամբ» (Նարեկացի, «Մատեան ողբերգութեան», ԽԴ): Քրիստոսն անհատ չէ, ընդհանրական տիպ է, օրինակ ու չափանիշ, որ գործում է բոլոր ժամանակներում, մարդկային բոլոր արարքների մեջ, կյանքի բոլոր բնագավառներում: Հիսուսի կերպարը այս բովանդակությամբ է գործառում Թումանյանի ստեղծագործության մեջ: Նա ամեն օր ապրում է ամեն մարդու մեջ, ամեն օր հալածվում ու քարկոծվում է, ամեն օր ամեն մարդու, մարդկային ամեն արարքի մեջ մեռնում ու հարություն է առնում: Այդ Մարդ-Հիսուսի ճակատագիրն է Թումանյանի «Ինչ ես կատաղել անմեղ արարքից…» սկզբնատողով բանաստեղծության թեման: Թումանյանն էլ, ինչպես

1 **Հովհ. Թումանյան,** Երկերի լիակատար ժողովածու, 10 հատորով, հ. 6, Երեւան,1988, էջ 309-310:

Քրիստոսը, հալածվում ու քարկոծվում է անգետ ու միամիտ ամբոխի կողմից անմեղ արարքի կամ արդար գործի համար: Մարդը, «արժանավորի առաջ խոնարհած», պատարագ է մատուցում, իսկ ամբոխը, չար «նախանձից կուրացած», ուզում է քարկոծել նրան: Եւ հանիրավի հալածված մարդու մեջ արթնանում է ճշմարտության բողոքի ձայնը. Նա ուզում է իր նմանի մեջ տեսնել Աստծուն, մինչդեռ շատ քիչ մարդիկ էին Հիսուսի մեջ տեսնում Աստծու որդուն.

Միամիտ ամբոխ, մոլորված ես դուն,
Ես անգիտությամբ կուռք չպաշտեցի.
Ես այն մարդու մեջ տեսա Աստծուն,
Ահա թե ինչու երկրպագեցի[2]:

Աստծո որդու՝ Քրիստոսի կերպարն համանման մեկնաբանությամբ հանդես է գալիս է «Մարգարե» բանաստեղծության մեջ: Թումանյանի ժամանակակիցը՝ Տիգրան Փիրումյանը, վկայում է, որ ոտանավորը գրվել է Գրիգոր Արծրունու հրապարակախոսական գործունեության քսանհինգամյակի կապակցությամբ՝ «… Թումանյանը կամեցավ այդտեղ իդեալական կերպարանք տալ, աչքի առաջ ունենալով Քրիստոսին»[3]:

Թումանյանի մարգարեն էպիկական կերպար է, Քրիստոսն ինքն է՝ մարմին առած «լուսո ջահը ձեռքին»՝ «կորստյան փոսից» մարդկանց դեպի կյանք առաջնորդող երկրային առաքյալի կերպարանքով:

«Մարգարե» բառը եբրայերեն «նամու»՝ «նավի» բառն է, որ թարգմանվում է «կանչող»: Հին ուխտում Աստված սկզբում ժողովրդին իր խոսքը, կամքը հայտնում էր անմիջականորեն (ձայնի կամ բնության նշանների միջոցով), հետո մարգարեների միջոցով. Աստված կանչում է Մարգարեին՝ Կանչողին, եւ այդպես խոսում ժողովրդի հետ:

Մարդու փրկության սուրբ առաքելությամբ աշխարհ եկած երկրային մարգարեն նույնպես կատարյալ է, որովհետեւ նրա խորհրդով գործում, նրա լեզվով խոսում է հավերժական Հիսուսը: Իսկ նա Հիսուսի նման, վեհության կնիքը ճակատին, ճշմարտության սուրբ պատգամներով հայտնվել է «մոլար աշխարքին» եւ դարձ է քարոզում «հրաթափ լեզվով»: Մարդիկ, նրա աստվածային ձայնից սարսափած, հուզվում են, աղաղակում.

-Ո՞վ ես դուն, արի, այս մեր հանցավոր
Ուրախությանը մասնակից եղիր,
Կամ թող վայելենք մեր կյանքն անցավոր,
Թե չէ՝ խիստ պատժի քարերից փախիր[4]:

Սակայն մարգարեն, ինչպես Աստծու որդին, ներելով մարդկանց մեղքերը, մոլորությունները, անվհատ առաջ է գնում՝ «անուշադիր յուր անձի վնասին», գնում է՝ խավարից փրկելու մարդկանց՝

Եւ երբ որ լուսո նա ջահը ձեռքին
Մոտեցավ կորստյան փոսի եզերքին,

2 **Հ. Թումանյան**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, Երեւան, 1988, էջ 38:
3 Անդ, էջ 556:
4 **Հ. Թումանյան**, հ. 1, էջ 53:

Ապերախտ ձեռով ամբոխը խավար
Ջարկեց, խորտակեց ջահը փրկարար:

Խավար, անմիտ ամբոխը «ապերախտ ձեռքով» խորտակում է փրկարար ջահը: Դա հենց Հիսուսն է՝ կանգնած փարիսեցիների դատաստանի առաջ: Միայն հետո, ժամանակներ անց, երբ փորձանքը վրա էր հասել, ամբոխը ուշքի է գալիս.

Ժամանակ անցավ, թշվառ ամբոխին
Արդեն փորձանքը վրա էր հասած,
Երբ ուշքի եկավ, վայ փվեց գլխին.-
«Նա մարգարե էր, նա իրավ ասաց»:

Այս է վկայում Աստվածաշունչը. «Որովհետև Մովսեսը հայրերին ասաց, Ձեր Տէր Աստուածը մարգարէ վեր կ'կացնէ ձեզ համար ձեր եղբայրների միջիցը ինձ նման, նորան լսեցէք ամեն բանի համար՝ ինչ որ խօսեցի ձեզ»(Գործք. Գ 22): «Եւ ասաց, Ճշմարիտ ասում եմ ձեզ, թէ ոչ մի մարգարէ ընդունելի չէ իր հայրենիքում»(Ղուկ. Դ 24) :

Քրիստոսի հարությունը կյանքի նորոգության եւ մահվան վրա կյանքի տարած հաղթանակի խորհուրդ ունի: Թումանյանը Քրիստոսի հարությանը նվիրված երեք բանաստեղծություն է գրել: Այս թեմայով առաջին՝ «Քրիստոս հարյավ հրաշափառ» բանաստեղծության մեջ ասվում է, որ Քրիստոսի հարության հետ համայն աշխարհն է հարություն առնում, սերն է դուրս գալիս մոռացության խավարից, որպեսզի նոր կենդանությամբ վերընձյուղի «դառն ու անձուկ» կյանքը:

Քրիստոս հարյավ հրաշափառ
Հարյավ աշխարհքն էլ նորից,
Դու էլ, սեր իմ, հարություն առ
Մոռացության խավարից[5]:

Սերն այստեղ, իհարկե, պետք է հասկանալ հասկացության ամենալայն իմաստով, ինչպես առհասարակ գործառում է Թումանյանի ողջ ստեղծագործության մեջ: Հայտնի է, որ Սերը Հույսի եւ Հավատի հետ աստվածության գաղափարի հիմնային ստորոգելիներից մեկն է: Աստված ինքը որքան Հույս է, Հավատ է, նույնքան եւ գուցե ավելի Սեր: Բանաստեղծության վերջին քառատողը՝

Հիշի՛ր որ քեզ դեռ սիրում եմ,
Եւ այժմ, ընկած պատրանքից,
Ձեռքս, ահա, տարածում եմ-
Ինձ ազատիր այս կյանքից,-[6]

չպետք է հասկանալ իբրեւ դիմում՝ ուղղված որոշակի անհատի, սիրո որոշակի առարկայի, այլ մի վերին սրբության, առանց որի կյանքը «պատրանք» է, կյանքի ունայնության պատրանքից կարելի է ազատվել միայն սիրով: Բանաստեղծական այս հոգեբանության արտահայտություններից չէ՞ նաեւ հայտնի քառյակը.

Ո՞վ իմանա՝ ո՛ւր ընկանք,
Քանի օրվա հյուր ընկանք,

5 **Ն. Թումանյան,** Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, 1988, էջ 80:
6 Անդ, էջ 80:

Սերն ու սիրտն էլ երբ չըկա՝
Կըրա՞կն ընկանք, զո՞ւր ընկանք[7]:

Առհասարակ Թումանյանի քնարական մտորումներում միշտ իրար կողքի են Սերն ու Բարին.«Սերն ու բարին առատ, Անուշ…»:

Քրիստոսի հարությանը նվիրված երկրորդ՝ երեք տարի անց գրված «Քրիստոս հարյավ… Ա՞խ, եւ այս հոծ…» սկզբնատողով բանաստեղծության մեջ Հիսուսի հարությունը բանաստեղծի «վհատ» հոգում լույսի, հույսի արահետներ է բացել՝ լցնելով «երանիներով»: Արդեն քանի՞ երրորդ անգամ իրեն հիշեցնում է բանաստեղծի մշտարթուն երազանքը՝ նույն սաստկությամբ սերը հառներ, «երկինքս էլի դառնար անամպ», իսկ միտքը՝ ուժգին սավառներ: Բանաստեղծության երրորդ քառատողում վհատված հոգու ականջին հնչում է սթափեցնող խորհրդավոր ձայնը.

-Լռ՛ւռ կաց, անմիտ, ի՞նչ ես լալիս
Վըհատ ձայնով ծերության,
Դեռ քո ճամփին լույս է տալիս
Ճառագայթը վաղորդյան[8]:

Վաղորդյան ճառագայթը Հիսուսի հարությամբ, կյանքի, Հույսի, Հավատի նորոգության խորհուրդն է կրում, որը եւ դառնում է վերջին քառատողի լավատեսության հիմքը.

Եւ մըռայլից, որ կա իջած
Ծանր ու տարտամ քո սըրտին,
Պիտի հառնեն տանջված, խաչված
Ցընորքները քո նախկին[9]:

Ակնհայտ է թումանյանական այս տողերի աղերսը Պողոս առաքյալի՝ կորնթացիներին ուղղած առաջին թղթի հետ, որ հիշեցնում է. «...քանզի մի մարդով մահ եղաւ եւ մի մարդով՝ մեռելների յարութիւն: Ինչպէս Ադամով բոլորը մեռնում են, նոյնպես եւ Քրիստոսով ամէնքը պիտի կենդանանան՝ իւրաքանչիւրն իր հերթին. նախ Քրիստոս. ապա՝ քրիստոնեաները նրա գալստեանը: …Առաջին մարդը՝ Ադամը, եղաւ կենդանի շնչով, երկրորդ Ադամը՝ կենդանարար հոգով: Բայց ոչ նախ հոգեւորը, այլ՝ շնչաւորը, եւ ապա երկրորդ մարդը՝ Տէրը՝ երկնքից: Ինչպէս հողեղէնն , նոյնպէս եւ հողեղէններս ենք, եւ ինչպէս երկնաւորը, նոյնպէս եւ՝ երկրաւորները: Եւ ինչպէս կրեցինք հողեղէնի պատկերը, նոյնպէս եւ պիտի կրենք երկնաւորի պատկերը » (Ա Կորնթ. ԺԵ 21-23, 45-49):

Եւ վերջապես, Քրիստոսի հարության բուն խորհրդին է նվիրված <Հարություն> բանաստեղծությունը, որ սկսվում է քրիստոնեական պատվիրանների եւ իրական կյանքի միջեւ աղաղակող հակասության ընդգծմամբ.

Քրիստոս հարյավ…երկինք գնաց,
Երկրում թողեց պատվերներ,
Բայց պատվերը գրքում մնաց,
Եւ աշխարհքը հեծում է դեռ:

---

7 **Ղ. Թումանյան,** Ընտիր երկեր, Երեւան, 1978, էջ 66:
8 **Ղ. Թումանյան,** Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, էջ 134:
9 Անդ, էջ 154:

Հուդայի՝ երեսուն արծաթով Քրիստոսին մատնելը, ապա եւ Պիղատոսի՝ ձեռքերը լվանալը բանաստեղծի համար միայն ավետարանական անցյալ չեն, այլեւ շարունակվող ներկա.

Դեռ կուրացած ժանգ արծաթից՝
Մատնություններ են անում,
Եվ փախչելով արդար դատից՝
Միշտ ձեռքերն են լվանում:

Հիշենք Մատթեոսի ավետարանը. «Այն ժամանակ տասներկուսից մէկը, որ Յուդա Իսկարիովտացի էր ասում, գնաց քահանայապետի մօտ եւ ասաց. Ինչ էք կամենում ինձ տալ, եւ ես ձեզ մատնեմ նորան: Եւ նորանք երեսուն արծաթ կշռեցին տուին նորան: Եւ նա այնուհետեւ յարմար ժամանակ էր որոնում, որ նորան մատնէ» (Մատթ. ԻՁ 14-16):

Զինվորների կողմից Քրիստոսին ծանակելը, ապա եւ խաչ հանելը եւս որպես շարունակական ընթացք է ներկայացվում.

Ապտակում են դեռ ծաղրելով
Անմեղության ճակատին,
Եւ հարության օր տոնելով՝
Խաչ են հանում ճշմարտին:

Համեմատենք Մարկոս եւ Մատթեոս ավետարանիչների վկայությունը (Մատթ. ԻԷ 24): Ծաղրելով ապտակում են անմեղության ճակատին «Եւ հարության օր տոնելով՝ Խաչ են հանում ճշմարտին»: Բայց ի՞նչ է լինելու «կարճամիտ անզգամների» վերջը եւ ի՞նչ՝ խաչհանվածների. իհարկե, արդարության հաղթանակի փառք.

Ո՞հ, կարճամիտ անզգամներ,
Դրանք այսօր կըմեռնեն,
Բայց վաղը ձեր փոշու վրա
Նոր փառքերով կըհառնեն[10]:

1895-96 թթ. հայկական ջարդերը խոր ու ծանր ազդեցություն են թողնում երիտասարդ Թումանյանի վրա: Այդ հոգեվիճակի ինքնատիպ արտահայտություններից է «Տրտմության սաղմոսներից» շարքը՝ բաղկացած երկու բանաստեղծությունից:

Հայտնի է, որ Դավթի 150 սաղմոսները տարբեր են իրենց կառուցվածքով ու բովանդակությամբ՝ օրհներգություն եւ փառաբանություն, խոստովանություն եւ ապաշխարանք, տոնախմբություն եւ ուխտագնացություն, գոհաբանություն եւ օգնություն, աղերսանք. տրամադրություններն էլ բազմազան են՝ անհույս տրտմությունից մինչեւ հանդիսավոր հոգեվիճակ: Գրեթե բոլոր սաղմոսները գրված են Աստծուն դիմելու ձեւով, Աստծո ամենազոր ուժի փառաբանություն են, նրա արդար դատաստանի հավատ եւ սպասում, ինչպես նաեւ տրտունջ ու դժգոհություն: Թումանյանի այդ օրերի հոգեվիճակին առավել համահունչ են եղել թախծոտ, ողբերգական տրամադրություն արտահայտող սաղմոսները: Այստեղից էլ շարքի վերնագիրը՝ «Տրտմության սաղմոսներից»: Վերնագրի երկրորդ բառի բացառական հոլովաձեւը թերեւս ցույց է տալիս, որ բանաստեղծը մտադիր է եղել շարունակել շարքը, բայց այդպես էլ մտադրությունը չի իրագործվել:

10 Անդ, էջ 154:

Դավթի ԺԲ (12) սաղմոսը «Մինչեւ յե՞րբ» հարցման կրկնությամբ Տիրոջն ուղղված հարցումների մի շարք է. «Մինչեւ յե՞րբ, Տէր, մոռանաս զիս ի սպառ, մինչեւ յե՞րբ դարձուցանես զերես Քո յինէն… Մինչեւ յե՞րբ բարձրանայ թշնամին ի վերայ իմ» (ԺԲ 1-4): Շարքի առաջին բանաստեղծությունը ակնհայտորեն գրված է Դավթի սաղմոսի ձեւական նմանությամբ.

Տե՜ր, մինչեւ ե՞րբ մեր աչքերը քեզ մընան.
Մեր գույժն հասավ հեռո՜ւ-հեռու ազգերին,
Աշխարհ լցվեց մեր աղաղակ, մեր կական,
Ու չի անցել մեր փանջանքը փակավին[11]:

Հավատարիմ մնալով սաղմոսների աղոթական ձեւին՝ Թումանյանը բանաստեղծության մեջ գործածել է աստվածաշնչյան այլ տողեր ու պատկերներ եւս.

Մի՞թե, Աստված, հաճելի չեն քեզ համար
Աղոթք ու սեր, կյանք ու փաղեր զըվարթուն:

Հռետորական հարցման այս ձեւը արտահայտում է Թումանյանի բանաստեղծական աշխարհի խոր դրամատիզմը. Մի կողմից՝ արարչական սկզբի կենսահաստատ տրամադրություն՝ «աղոթք ու սեր, կյանք ու փաղեր զվարթուն», մյուս կողմից՝ ցավ ու փառապանք, «աղաղակ ու կական»: Հավատի, հույսի երանության եւ այսաշխարհային փանջանքների ցավագին երկվություն է հնչում նաեւ Դավթի սաղմոսներում: «Կոտորածի ձոր» արտահայտությունն այստեղ վերցված է Երեմիայի մարգարեությունից, որտեղ Աստված նրա բերանով Իսրայելի հավատուրաց զավակներին սպառնում է ահավոր պատիժներով. «…օրեր են գալու, երբ այդ վայրի անունն այլեւս չի կոչվելու Գեղոման վայր կամ Ենոմացիների գերեզման, այլ՝ Կոտորածի ձոր» (Երեմիա ԺԹ 6): Թումանյանի բանաստեղծության մեջ տեղայնացվել է՝ կապվելով արեւմտահայության ջարդերի դաժան իրականության հետ: Աստվածաշնչյան իրողությունները դարձնելով իր ժամանակի արեւմտահայ իրականության դաժանորեն առարկայական պայմանների խորհրդանիշ՝ Թումանյանը հիմք է տալիս ենթադրելու, որ «Տրտմության սաղմոսներից» շարքն ստեղծվել է ոչ թե մի որոշակի սաղմոսի., այլ սաղմոսների ընդհանուր մթնոլորտի հետեւողությամբ, ինչպես նկատում է Էդ. Ջրբաշյանը, սաղմոսների շարքում դժվար է առանձնացնել մեկը, որը «տրամադրությունների ու մտքերի զարգացման ընթացքով, բառական հյուսվածքով ու կառուցվածքով լիարժեք հիմք տար ասելու, թե Թումանյանն իր այս բանաստեղծությունը գրելիս ամբողջովին հետեւել է այդ սաղմոսին: Ավելի ճիշտ կլինի ենթադրել, որ նա նկատի է ունեցել ոչ թե մեկ առանձին սաղմոս, այլ ձգտել է վերստեղծել Դավթի սաղմոսների մեջ անարդարության դեմ տրտունջի, դժգոհության եւ բողոքի տրամադրությունների ընդհանուր հոգեբանական մթնոլորտը, ընդսմին օգտագործելով առանձին աստվածաշնչային ոճեր ու բառեր»[12] :

Այնուամենայնիվ Դավթի սաղմոսների շարքում կարելի է առանձնացնել մի քանիսը, որոնք հավանաբար նկատի է ունեցել Թումանյանը իր շարքն ստեղծելիս: Այսպես, օրինակ, Դավթի ՃԱ սաղմոսի հետեւողությամբ է գրված այս շարքի երկրորդ բանաստեղ-

11 Անդ, էջ 165:
12 **Է. Ջրբաշյան**, Թումանյանի գրական ժառանգությունը , Երեւան, 2000, էջ 264:

ծությունը, որի առաջին հինգ տողերն ասես բանաստեղծական փոխադրությունը լինեն այդ սաղմոսի 4-5-րդ տողերի.

Սպառեցան որպէս ծուխ աւուրք իմ,
Եւ ոսկերք իմ որպէս խոռիւ չորացան,
Հարաւ որպէս խոտ եւ ցամաքեցաւ սիրտ իմ.
Մոռացայ ուտել զհաց իմ:

Ահա Թումանյանի բանաստեղծության համապատասխան տողերը.

Աստված, ինչպես ծուխ օրերըս անցան
Ոսկերքըս, ինչպես խըռիվ չորացան.
Սիրտըս ցամաքեց, ընկա խոտի պես.
Ճամփես մոռացա ահագին վըշտես.
Հացըս նախատինքն եղավ օտարի:

այնուհետև՝

Եղէ ես որպէս բու յաւերակի
Տքնեցայ եւ եղէ ես որպէս ճնճղուկ միայն ի տանիս /ՃԱ 7/

Նույնն են Թումանյանի բանաստեղծության տողերը.

Տըքնեցի, ինչպես բու ավերակում,
Ինչպես միայնակ ճնճղուկ՝ տանիքում…

Թումանյանի՝ Տիրոջն ուղղված ողբերգական դիմում-հարցումները, կապվելով սաղմոսների հետ, հիշեցնում են նաև Նարեկացու «ի խորոց սրտի» խոսքը Աստծու հետ, որ հույսի, հավատի, սիրո հետ միասին արտահայտում է նաև խոր տագնապ մեղքերի մեջ թաղված մարդկության համար: Թումանյանի «սաղմոսներում» այդ տագնապը ծագում է ոչ թե մեղքի գիտակցությունից, ինչպես Դավթի սաղմոսներում է, այլ աստվածային կամքի վճիռներից, որոնց պատճառը բանաստեղծը չի կարողանում գտնել, ուստի եւ հարցումները մնում են անպատասխան: Համընդհանուր ցավը վերաճում է խորապես անձնականի, երբ մարդը, անհատը, ազգը նաև, որպես հավաքական անհատականություն, մոլորվում է անպատճառ հետեւանքների, անպատասխան հարցերի մութ բավիղներում: Ողբերգական այս հոգեվիճակի ուղղակի արտահայտությունն է բանաստեղծությունը եզրափակող բացականչություն-հարցը՝ «մի՞թե չհասավ ժամը փրկության»: Մարդու անձնական եւ մարդկության հավաքական բանականության տրված չէ լուծել այդ դրամատիկ հարցը, ինչպես վկայում է նաև Աստվածաշունչը. «Զեզ տրուած չէ իմանալ ժամերը եւ ժամանակները, որ Հայրը դրեց իր իշխանութեան մէջ…» (Գործք. Ա 7):

Անպատասխան հարցերի շարանը Թումանյանին հաճախ կանգնեցնում է մի այլ երկընտրանքի առաջ: Պանթեիստ բանաստեղծը հիացած ու զարմացած է «տիրոջ աշխարհքի» ճոխությամբ, բազմազանությամբ ու գեղեցկությամբ, սիրահարված է այդ աշխարհին եւ տարակուսանքով դիմում է ինքն իրեն

Ինչո՞ւ համար են մարդիկ
Իրար զրկում, սպանում[13]:

13 **Ն. Թումանյան**, Երկերի լիակատար ժողովածու, հ.1, էջ 39:

Մի՞ թե մարդիկ մոռացել են Աստծուն կամ ուրիշ ապրված են դավանում: Ո՞ւր է նրանց այդ նոր ապրվածը.

Հապա քո Աստվածը որտեղ է բնակվում,
Այնտե՛ղ արդյոք, ուր դուն էլ չըգիտես,
Նա՞ է որ միայն սարսափ է զարկում,
Այդպիսի Աստված ո՞վ քարոզեց քեզ[14]:

Այդ անօրեն, մոլորյալ ապտծուն Թեքեյանը Սուտ Աստված է անվանում եւ փնտրում է՝ ո՞ւր է Բուն Աստվածը: «Բուն Աստծու» որոնման հոգեբանական մղումն է ընկած նաեւ Թումանյանի «Զարամիտներին» եւ «Միամիտներին» բանաստեղծությունների հիմքում, որոնք գրված են հակադրության սկզբունքով: Առաջինում բանաստեղծը նկատի ունի «մեծ հայրերի ընկած զավակներին», որոնք դարձել են «սրտրուկ մոլի կրքերի», խաբում են աշխարհին եւ «դատաստանի առաջ դողալով»՝ «կեղծավոր արտասուք» են թափում, բայց որոնք վերջիվերջո չեն խուսափելու արդար դատաստանից:

Կհասնի նա ձեզ, բարկությամբ արդար
Արժանի մահով պատուհասելու,
Եւ ո՞վ պիտի ձեզ ցույց տա ճանապարհ
Նորա բարկության պատժից փախչելու[15]:

Հիշում ենք Նոր կտակարանի հայտնի պատգամը. «Վա՜յ ձեզ, դպիրներ եւ փարիսեցիներ՝ կեղծավորներ, որ նման էք ծեփած գերեզմանների, որ դրսեւանց գեղեցիկ են երեւում, բայց ներսեւանց լիքն են մեռելների ոսկորներով եւ ամեն պղծութիւնով: Այնպէս էլ դուք՝ դրսեւանց արդար էք երեւում մարդկանց, բայց ներսեւանց լիքն էք կեղծաւորութիւնով եւ անօրէնութիւնով» (Մատթ. ԻԳ 27,29):

«Միամիտներին» ձուներգը գրված է Քրիստոսի Լեռան քարոզի ոճով. «Երանի որ քաղցեալ եւ ծարաւի իցեն արդարութեան, զի նոքա յագեսցեն… Երանի այնոցիկ, որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն… Երանի հեզոց, զի նոքա ժառանգեսցեն զերկիր… Երանի, որ հալածեալ իցեն վասն արդարութեան» (Մատթ. Ե 3-12):

Երանի է ձեզ, որ չեք հասկանում,
Թե մարդիկ ինչու, ինչեր են անում,
Երանի ձեզ, որ մարդու չեք զրկում,
Եւ ոչ ձեզ հասած հարվածն եք զգում,
Երանի ձեզ, որ ոչինչ չըգիտեք,
Որ հոգով անդորր, սրտով հանգիստ եք[16]:

Բանաստեղծության մեջ Թումանյանը երանի է տալիս այն միամիտներին, որոնք, անհաղորդ ու անգիտակ աշխարհում գործվող չարիքներին, ապրում են երջանիկ անգիտության մեջ, նույնիսկ իրենց հասած հարվածները չեն զգում եւ <<հոգով անդորր, սրտով հանգիստ>> են: Նրանք են եւ նրանց նմանները, որ, ինչպես ասվում է Լեռան քարոզում, պիտի արժանանան Աստծու տեսությանը:

14 Անդ, էջ 38:
15 Անդ, էջ 57:
16 Անդ, էջ 59:

Բանաստեղծությունն ունի նաև այլ ենթիմաստ: Մարդկանց գործած չարիքներին անմասնակից ու անհաղորդ լինելը, մարդկանց չզրկելը պասիվ բարություն է, ինչ-որ իմաստով՝ թույլի հատկություն: Աստվածային բարությունը ակտիվ սկիզբ ունի, գործ է, պայքար ու զոհաբերություն, ինչպես բարության մարմնացում Հիսուսն էր՝ գործով ու նահատակությամբ:

Կտրված հայրենի եզերքից (քաղաքային կյանքը միշտ օտար մնաց բանաստեղծի հոգուն)՝ Թումանյանն զգում է, որ կյանքի օրերը անդառնալիորեն անցնում են անպտուղ, տխուր, ձանձրալի («Տրտունջ»): Նա տրտնջում է՝ խորապես համոզված, որ ունայն է իր տրտունջը: Կյանքում գործում են այլ օրենքներ, այլ արժեքներ են իշխում, եւ բանաստեղծի ձայնն էլ հնչում է «ձայն բարբառոյ յանապատի»: Շուրջը քարսիրտ անտարբերություն է տիրում, օտար ու խորթ են բոլորը, ոչ ոք չի հասկանում մերձավորի լեզուն, չի կիսում վիշտը: Բանաստեղծը եւս օտար ու խորթ է միջավայրին, իր շրջապատին: Մենություն: Բայց ավելի լավ է մենակ մնալ, որովհետեւ. «Միայնակությունը անկախություն է, ինքնաբավականություն: Միայնակությունը մտածողի պահանջմունքն է, շփվելը՝ սրտի պահանջմունքը»[17]: Թումանյանը եւս երազում է այդպիսի միայնության. «…Մենակության մեջ ամենավսեմ հաճույքներ կան, եւ դրանք այն բոպեներն են, երբ մարդու հոգին լայն, խաղաղ, անվրդով ծփում է եւ սիրտը քաղցր-քաղցր ճմլում՝ երբեմն որոշ, երբեմն անորոշ կարոտներով: Եւ այդ բեպեների մեջ է, որ հայտնագործություններ են անում մարդիկ, ստեղծագործում են, իհարկե, եւս առավել բանաստեղծ մարդիկ: Մենակությունը աստվածային դրություն է: Եւ մենակ մարդիկ են լավ բաներ տվել աշխարհին»[18]:

Մենակության այդ զաղափարի հետ է կապված «Քրիստոսն անապատում» բանաստեղծության հղացումը, որտեղ տարբեր կողմերից է դիտված ու մեկնաբանված Հիսուսի կերպարը: Մատթեոս ավետարանիչը վկայում է, որ Հորդանան գետում մկրտվելուց հետո՝ «Հիսուս անապատ տարվեց հոգուց՝ սատանայից փորձվելու: Եւ քառասուն գիշեր ծոմ պահեց, ապա քաղց զգաց: Եւ փորձիչը՝ սատանան, մոտենալով նրան՝ ասաց. «Եթե Աստծու Որդին ես, ասա, որ այս քարերը հաց լինեն»: Նա պատասխանեց եւ ասաց. «Գրված է՝ միայն հացով չի ապրի մարդը, այլ՝ այն ամեն խոսքով, որ դուրս է գալիս Աստծու բերանից» (Մատթ. Դ 2-4): Այս թեմայով է ստեղծված ռուս նկարիչ Ի. Ն. Կրամսկոյի «Քրիստոսն անապատում» կտավը, որտեղ Հիսուսը պատկերված է մի քարի վրա նստած խորհելիս: Դա ժամանակակիցներին հիմք է տվել ենթադրելու, թե Թումանյանի համանուն բանաստեղծությունն ստեղծված է այդ կտավի ազդեցությամբ: Մինչդեռ, ինչպես գրում է բանաստեղծը, ինքը Կրամսկոյի նկարը տեսել է ոտանավորը գրելուց երկու շաբաթ անց եւ զարմացել նմանությունից[19]: Նմանությունն, իհարկե, պատահական չէր: Երկուսի աղբյուրն էլ Ավետարանի նույն վկայությունն էր, ուր խոսվում է անապատի եւ այդ վայրին ոչ բնորոշ քարերի մասին: Երկուսի մոտ էլ անապատի միայնության մեջ խորհող Քրիստոսն է, որ բնականաբար պետք է նստած լիներ քարի վրա: Թումանյանի բանաստեղծության մեջ շեշտված է հատկապես Հիսուսի մարգարեության խորհուրդը: Նա Աստծու որդին է, բայց ծնված է մարդուց

17 **Լ. Ֆոյերբախ**, Քրիստոնեության էությունը, Երեւան, 1968, էջ 125:
18 **Ն. Թումանյան**, հ. 5, էջ 203:
19 **Ն. Թումանյան**, հ. 1, էջ 573:

եւ աշխարհ է եկել իր նմանին մեղքերից փրկելու ասպվածային առաքելությամբ: Եւ ահա նա անապատի լռության մեջ դարված է աշխարհի մասին ծանր մտքերով.

Անապատի մեջ խավար ու տխուր,
Ցրված քարերից մի քարի վրա,
Գլխիկոր նստած, մտախոհ ու լուռ՝
Աշխարհի մասին մտածում է նա[20]:

Նա լավ գիտի իր առաքելության նպատակը՝ լույս ու բարություն պիտի տարածի աշխարհում, որտեղ Աստծուց հեռացած ու Աստծուն մոռացած մարդկանց շրջապատում ինքը նույնքան մենակ է լինելու, որքան մութ անապատում: Կանխորոշված է իր ուղին. նա իր նպատակին պիտի հասնի ծանր փորձությունների ու անձնազոհության գնով: Դրա համար էլ մութ է նրա ճակատը, ինչպես գիշերային անապատը: Բայց դա հուսահատության մթությունը չէ, այլ վկայում է պարտքի խոր գիտակցության մասին.

Նրա ճակատը մութն էր ավելի,
Քան անապատը գիշերվա մըթնում,
Մտածում էր նա՝ սեր-լույս ծավալի
Մարդկային կյանքի մութ անապատում:

Դա երկրային Քրիստոսն է, որ քաջ ծանոթ է աշխարհի անցուդարձերին, ազգերի պատմության արյունալի դրվագներին: Մարդկային տառապանքները անծանոթ ու խորթ չեն նրա համար, քանի որ դրանք ի վերուստ սահմանված էին նաեւ իր համար.

Աչքի առաջով անց էին կենում
Սըրով, արյունով խուժադուժ ազգեր,
Անճար ու տըկար լաց էին լինում
Աղքատը, այրին ու որբը անտեր…[21]

Կախման կետերը եւ բանաստեղծությունը եզրափակող երկտողը ցույց են տալիս, որ Քրիստոսի առաքելությունը երկրի վրա դեռ չի ավարտվել, աշխարհը դեռ թաղված է մեղքերի մեջ, մարդը դեռ օտար է իր արարիչ Աստծուն՝ դեռ «հեռու է մինչեւ մարդը իր ճամփան…»:

Քրիստոսը, քրիստոնեական ոգին հավասարապես փայլում են եւ Միջնադարի, եւ Վերածնունդի, եւ մեր ժամանակների վրա (ընթացքը հավերժ է), որոնց ներհակությունը կապված է նրա գործունեության եւ այսաշխարհային մակարդակում նրա ընկալման եւ ըմբռնման տարբեր հարթությունների հետ:

20 Անդ, էջ 108:
21 **Ն. Թումանյան**, հ.1, էջ 108: